ՄԻՆԱՍ ՔՀ. ԵՐԶՆԿԱՑԻ ԵՒ ՄԱՐԳԱՐ ՔՀ. ԵՐԶՆԿԱՑԻ. — Մինաս քհ. 1638—1649 լս. եղած է Ս. Հրեշտակապետի վանքին. 1649ին Ս. Հրեշտակապետի վանքին ՄՁ. Թ. 234 ձեռագիրին յիշատակարանը կը յիշատակէ Մինաս երէց Երզնկացին հետևեալ կերպով. «... այս սբ գիրքս որ է Մաշտոց եւ Աղաւթամատոյց, որ ստացաւ զսա մահտեսի Մարիամն ի հալալ ընչից իւրոց և եդ յիշատակ ի սբ քաղաքն Երուսաղէմ ի դուռն սբ Հրեշտակապետին. և որք հանդիպիք սմա, ասացէք Աստ ողորմի իւր հոգւոյն և իւր ծնաւղին, ամէն։ Թվականութեան Հայոց ՌՂԸ (=1649), ի ժամանակին յայնմիկ է լուսարար սբ. Հրեշտակապետին Մինաս երէց Երզնկացին, մեղաւք լցեալ խեղճ ու լալին, որ բազում աշխատանս կրեաց վասն նորոգութեան սբ. տաճարին, ի ներսէ և ի դրսէ. դ. տարի լուսարար կացի ի տունն սբ. Հրեշտակապետին իբրև զմի ի մշակաց կու սպասաւորէի, միթէ հոգւոյս մէկ ճար լինի, ամէն եղիցի.» (Խաչ. Ցուց. էջ 385)։

1638 ին Գալուստ գրչի ձեռքով, հաւանաբար Ս. Յակոբի վանքին մէջ ընդօրինակուած Սաղմոսի մը (ՄՁ. Թ. 174) ստացողն է և. կը նուիրէ զայն Ս. Յակոբի վանքին հետևեալ յիշատակարանով. « . . . ընդ այս փափաքաւղ եղեալ այսմ տառիս Երզնկացի Մինաս քհյն. և ստացաւ զսա ի յարդար գոյից յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն իւրոց Աթանասին և Հայոցին և կողակցին Մինային. . . և եդ յիշատակ ի սբ. քաղաքն Երուսաղէմ, ի դուռն սբ. Յակոբայ . . .»։

1671 ին Ս. Յակոբի վանքը կ'այցելէ ուխտաւորութեամբ Երզնկացի Մարգար երէց եւ կը գրէ այս յիշատակարանը նոյն ձեռագիրին մէջ, «Երզնկացի մեղաւոր Մարգար երէցս յիշման արժանի առնէք. մէկ Հայր մեր ասացէք. Աստ զձեզ բարին յիշէ. Տօլվաթ երէցկինս յիշեցէք, որ զքէմխա կապան ետ շապիկ յիշատակ (յ)երուսաղէմայ, ի դուռն սբ. Յակոբայ . . . Ռճի (=1671). (Խաչ. Ցուց)։

ՄԻՆԱՍ ՔՀ. ՍՏԱՄՊՈԼՑԻ. — 1644 ին Գրիգոր պտրք. Պարոնտէրի օրով կ'այցելէ Ս. Յակոբի վանքը. ՄՁ. Թ. 1703, 1337 թուականով ձեռագիր խազգիրքի կամ մանրուսմունքի նուիրատուն, որ նոյն ձեռագիրին մէջ ունի հետևեալ յիշատակարանը.